

— Ստորին Ազուլիս. — Գրեթէ երկու միոն վերին Ազուլիսէն զէպ ի հարաւ կ'իճկուի նաք զարուս սկիզբը՝ Դաշտ գիւղը, զոր 1820—5 տարեներու մէջ, Հայերը գնելով Պարսից թագաժառանգ Ապպազ Միրզայէն՝ կոչեցին Ներքին կամ Ստորին Ազուլիս։ Բնակիչք ամբողջ Հայք են 110 տուն իբր 1000 հոգի։ Ունին երեք եկեղեցի, Ս. Երոդոսարեան, Ս. Սարգիս և Ս. Մինաս։

Ազուլիսաց նկարագրութիւնը աւարտելէ վերջ, յիշենք նաեւ 1884 տարւոյ մայիս 2 ին պատահած աղէտալի արկածը։ Նախ, ձուռնափ մեծութեամբ կարկուտ կու զայ և ապա սաստիկ անձրեւ՝ որ առաջ կը բերէ սարսափելի հեղեղ մը, որով՝ բոլոր այգիները փռնալէ զատ գրեթէ 70 տուն փառուեցան, 44 հոգի մեռան, և ամբողջ Ազուլիսը տղմով և սկով լեցուեցաւ։ Եղած ֆետսը համարուեցաւ 500,000 առաւելի։ Ողբալով գրեցին ժամանակին լրագիրներէն՝ Արձազանք, Նոր Դար և մանաւանդ Մշակ (թ. 58. ԺԳ տարի) մանրամասն նկարագիրը հրատարակեց իւր Մայրմեանցի նամակով։ Չանազան քաղաքացի մէջ փառելոց համար հանգանակութիւնք եղան, և փութացին վերանորոգեցին և կարգաւորեցին զայն։ Քաղաքիս այս արկածէն քիչ օր վերջը վախճանեցաւ աղջկանց և տղայոց վարժարանաց հիմնարկու և բարերար Աւետիս Տէր Մկրտչեան 93 տարեկան։

— Սխական 323—337։ Ասաքել պատ. 246, 247, 346, և այլն։ Չամչեան Պատ. հտ. Գ, 854։ Ազուլեցոց Բարրասը Մ. Ա. 4—15։ Փորձ. Բ տարի, Թ. Բ. 363—367։ Տիկ. Շանթը. Բագմավեպ հտ. ԽԲ (1894), 533—539։

Հ. ՍՈՒՔԻԱՍ ԷԲԹԻՆԵԱՆ

Շարայարէրի



ԱՆԻ, ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ
(Պատմական և հնագիտական հետազոտութիւն¹)

ՊՐՈՖ. Ն. ՄԱՌԻ

Ա.

ԱՆԻՈՅ հիմնարկութեան տարին անյայտ է։ Երբեմն անյայտնութեամբ է հիշգործող դարու Հայոց պատմութեան մէջ, և իւրաքանչիւր անգամ խօսքը Անույ մասին՝ է որպէս բերդ։ Անին գնահատուեց նաեւ Բագրատունի Հայ իշխաններից. երբ Բագրատունիք տեղափոխուեցին Անի, այն ժամանակ այս վերջինս զարձաւ թագաւորութեան մայրաքաղաք։ Բագրատունեաց թագաւորութիւնը իսկապէս մի իշխանութիւն էր. այն ժամանակ Հայաստանի մէջ քիչ չէին այդպիսի իշխանութիւններ. նրանցից մի քանիսը, ինչպէս օրինակի համար, Վասպուրականի իշխանութիւնը իրեն զուով ունենալով Արծրունի իշխանները, յաջող կերպով մրցում էին Բագրատունեաց թագաւորութեան հետ. ուրիշները, ինչպէս Լուսաւր իշխանութիւնը, որի պետերը նոյնպէս թագաւոր կ'անուանուէին և իրենց անուամբ ստակ էին կտրում Հայկական զորշններով, իրենց գոյութիւնը շարունակեցին նաեւ Անույ Բագրատունիների անկումից վերջը. բայց և այնպէս, այս իշխանութիւններից և ոչ մէկը ընդունակ չեղան բարձր մնալու՝ գաւառական, կամ աւելի ճիշդը խօսելով՝ ցեղական շահերից. նրանցից ոչ մէկը չկարողացաւ դրաւել զէպ ի

1. Ուսուցչապետ Ն. Մառի այս յօդուածը, կատարուած Հնագիտական յանձնաժողովի յանձնարարութեամբ, այդ՝ որ տեղւոյն վրայ իւր շատ անգամ կրկնած հետազոտութեանց արդեւնքն է. իւր պատրաստած մեծ մենագրութեան միայն մի մասն է կազմում։

ինքը հայկական ազգային կեանքի բոլոր տարրերը և իւր մայրաքաղաքը շինել նորա կենդանութեամբ։ Առանձին հայկական թագաւորութեան գաղափարը — քրիստոսի ծնունդից արդէն մի քանի դար առաջ բողոքական շնորհ չէր հայաստանի հարաւային կողմերում — և արտաքին քաղաքական ճնշումների տակ շարունակաբար առաջանալով դէպ ի հիսին, — այս գաղափարը, որ հին Հայերին այնքան զոհերի պատճառ էր եղել, կամաց կամաց թուլանում էր, երբ Բագրատունիք ձեռք գրկին նորից կենդանացնելու նրան, կանգնելով իրեն պաշտպան հին հայկական աւանդութիւններին։ Այնին հայութեան տալիս առաջ մէկն ամբողջ Հայաստանի մայրաքաղաքի դիրքը բռնեց, և թէպէտ ամբողջ Հայաստանին վիճակուած չէր այլ եւս միանալ նոյն իսկ Բագրատունիների ստեղծագործական ձեռքի տակ, բայց և այնպէս Այնին ներկայանում է իսկապէս իրեն յաջորդ հայկական հին մայրաքաղաքների, — մի անյայտացած հարաւային քաղաքի (որ հայ պատմիչները նոյնացրել են Մծբին հետ), Արմաւիրի, Գուրինի, և այլն. բայց այն ինչ, հայկական քաղաքական կեանքի աւելի փառասուր շրջաններին պատկանող մեծ քաղաքներն՝ քնկան առասպելական հիւսիսային մէջ, և համեմատած երկրի հետ ներկայացնում են «զպոյծութիւն աւերածոյն», փորձիկ Անին, հայկական թագաւորութեան մարդ այս վերջին պատաստանարանը՝ կենդանական Հայաստանի մէջ, կանգնած է մեր առաջ, ինչպէս ողջ, իւր անցիկացրած կեանքի շուրջ փեղի փաստերով։ Մորա համար էլ Անին սիրելի է Հայերին, ինչպէս իրենց նախորդների ազգային — կրթական կեանքից մնացած ամենավերջին և ամենամոտիկ գաւազն հայերնի երկրի վերայ։ Բայց այս քաղաքը իւր աւերակներով բխի սիրելի չէ նաեւ գիտնականներին, որոնք նուիրուած են Հայաստանի անցիկի ուսումնասիրութեամբ, որտեղ նոքա կարող են դէմ առ դէմ ծանօթանալ հին հայկական իրականութեան (réalité) հետ, և հետեւաբար կարող են ընթանալ նորա ճիշտ հասկացողութեան ճանապարհի վերայ։

Այնին աւերակները հայկական գեղարուեստի թանկարարն են. այս կարծիքը ներկայումս գլխաւոր առիթ է բռնում այն հասարակութեան մէջ, որ հետաքրքրուում է հայկական հիւսիսային թագաւորութեան շինարարութեան մէջ, որտեղ քաղաքի «նշանակութիւնը» չէր պէտք է խաւարեցնէ գործի լուծմանը։ Իսկապէս Անույ մէջ աւելի լաւ հասկացուած են գտնուում հայկական գեղարուեստի օրինակները, քան մի որեւիցէ ուրիշ տեղ. բայց անհիմն կը լինէր այդտեղ պահպանուած արձանների մէջ փնտռել հայկական ճարտարապետութեան և քանդակագործութեան զուգահեռ-գործոցները։ Այն, ինչ որ այժմ կիրաներակ զիրար պահուում է Անույ մէջ, ընդհանրապէս ժամանակակիցներին արեւում է միայն որպէս երկրորդական շինութիւններ. իսկ ինչ որ կազմում էր Անեցիների հպարտութիւնը և որի մասին մի անսովոր հրճուանքով գրում էին պատմիչները, այն բոլորովին աւերուած է և ծածկուած հողի շերտերով։ Բաց ի սրանից Անույ մէջ գլխաւորաբար պահպանուած են աւելի ուշ ժամանակաշրջանի արձանների աւերակները. սրանցով չի կարելի գատնել ոչ միայն ընդհանրապէս հին հայկական գեղարուեստի քնաւորութեան մասին, ինչպէս սովորաբար ասում են շատերը, այլ և ոչ իսկ մասնաւորապէս տեղական հին Անիական ոճի մասին։ Նոյնպէս սխալ է Անույ հիւսիսայինների գնահատութեան մէջ՝ առաջնորդել բացառապէս գեղարուեստների պատմաբանին տեսակետով։ Անին թանգ աղծ է գիտութեան համար, ոչ միայն հայկական գեղարուեստի արտադրութիւններով, այլ իւր բոլոր արձանագրական և նիւթական յիշատակներով, որոնք շուրջ փեղի կերպով արտաբերուած են նրա քնաւորների հոգեկան և նիւթական կեանքը։ Եթէ արձանագրութիւնները, ինչպէս մենք ասել ենք ուրիշ տեղ, «մասամբ լրացնում են պատմիչների չոր և կարճ ասանդութիւնը, մասամբ հետաքրքրութիւն և մեծ նշանակութիւն են ընծայում այն բանին, որ առաջ բաց էր թողնուում որպէս մի անկատար տեղեկութիւն», երբեմն էլ նիւթական գիտերը, Անեցիք բնակարանների և դիրքի հետ ունեցած ծանօթութիւնը, լոյս կը սփռեն ի միջի այլոց հին հայկական կեանքի այն կողմի

որ թանկարարն է. այս կարծիքը ներկայումս գլխաւոր առիթ է բռնում այն հասարակութեան մէջ, որ հետաքրքրուում է հայկական հիւսիսային թագաւորութեան շինարարութեան մէջ, որտեղ քաղաքի «նշանակութիւնը» չէր պէտք է խաւարեցնէ գործի լուծմանը։ Իսկապէս Անույ մէջ աւելի լաւ հասկացուած են գտնուում հայկական գեղարուեստի օրինակները, քան մի որեւիցէ ուրիշ տեղ. բայց անհիմն կը լինէր այդտեղ պահպանուած արձանների մէջ փնտռել հայկական ճարտարապետութեան և քանդակագործութեան զուգահեռ-գործոցները։ Այն, ինչ որ այժմ կիրաներակ զիրար պահուում է Անույ մէջ, ընդհանրապէս ժամանակակիցներին արեւում է միայն որպէս երկրորդական շինութիւններ. իսկ ինչ որ կազմում էր Անեցիների հպարտութիւնը և որի մասին մի անսովոր հրճուանքով գրում էին պատմիչները, այն բոլորովին աւերուած է և ծածկուած հողի շերտերով։ Բաց ի սրանից Անույ մէջ գլխաւորաբար պահպանուած են աւելի ուշ ժամանակաշրջանի արձանների աւերակները. սրանցով չի կարելի գատնել ոչ միայն ընդհանրապէս հին հայկական գեղարուեստի քնաւորութեան մասին, ինչպէս սովորաբար ասում են շատերը, այլ և ոչ իսկ մասնաւորապէս տեղական հին Անիական ոճի մասին։ Նոյնպէս սխալ է Անույ հիւսիսայինների գնահատութեան մէջ՝ առաջնորդել բացառապէս գեղարուեստների պատմաբանին տեսակետով։ Անին թանգ աղծ է գիտութեան համար, ոչ միայն հայկական գեղարուեստի արտադրութիւններով, այլ իւր բոլոր արձանագրական և նիւթական յիշատակներով, որոնք շուրջ փեղի կերպով արտաբերուած են նրա քնաւորների հոգեկան և նիւթական կեանքը։ Եթէ արձանագրութիւնները, ինչպէս մենք ասել ենք ուրիշ տեղ, «մասամբ լրացնում են պատմիչների չոր և կարճ ասանդութիւնը, մասամբ հետաքրքրութիւն և մեծ նշանակութիւն են ընծայում այն բանին, որ առաջ բաց էր թողնուում որպէս մի անկատար տեղեկութիւն», երբեմն էլ նիւթական գիտերը, Անեցիք բնակարանների և դիրքի հետ ունեցած ծանօթութիւնը, լոյս կը սփռեն ի միջի այլոց հին հայկական կեանքի այն կողմի

վերայ, որի մասին հայկական պատմիչները գերեզմանական լուսթին են պահում:

Չմտնելով այնպիսի տեսութիւնների մէջ, որոնք կարելի է սպասել երկար պեղումներից և Անիի մէջ գտնուած նւթների ամէն կողմէն կատարուած ուսումնասիրութիւնից յետոյ, մենք այստեղ կը նկատենք միայն, որ Անեցւոց կացութիւնը, որքան էլ փոխուած լինի Անույ զարգացման տարբեր շրջանների մէջ, աւելի հարազատ և մօտիկ էր հին հայկական կեանքին, նորա ազնուական բնաւութեամբ և պատկարգային կազմակերպութեամբ, քան թէ հայ ժողովրդի աւելի մեղ մօտիկ կեանքի ձեւը, երբ քաղաքական անկումը, և մահմետականների կողմից եղած անընդհատ ճնշումները, վերածեցին հայերին այնպիսի մի պատկարզի, որ ենթարկուեցին միեւնոյն իրաւանց, ինչ որ սեփական էր բնոյհանուր «բրիստոնեայ հարկատուներին»:

Բ

Անին դրուած է մի ոչ բնդարձակ դաշտազետնի վերայ, որ բոլորովին կանոնաւոր եռանկիւնի չի ներկայացնում, որի զագաթը յնուած է Ալաշա գետակի Ախուրեան (Արփաշայ) գետի հետ խառնուրդից առաջ եկած անկեան մէջ, հիւսիսից Արաքս գետի մէջ թափուելուց երեսուն վերստ ցած: Եռանկիւնու հիմքը, դարձած զեպի հիւսիս արեւելք, բաց է, այն ինչ միտ երկու կողմերը պատրուպարուած են խոր հեղեղատներով և նեղ անցքերով, որոնց մէջ հոսում է փոթորկալից Ախուրեանը և համեա Ալաշա գետակը: Այս կողմերից նայելով՝ շուք կը տեսնէք մի սարահարթ, որի վերայ երբեմն պայծառ փայլում էր Անին: Այս լեռնադաշտի երկար և բարակ շղթայի սկզբում, որ կազմուած է սեղմուած նեղ անցքերից՝ Ալաշա գետակի Ախուրեանի մէջ թափուելուց առաջ, բարձրանում է մի բարձրութիւն: Այս բարձրութիւնը այն միջուկն է, որ տեղից առաջ եկաւ Անի: սա սկզբում Անի բերդն էր, բնութիւնից ստեղծուած, իսկ վերջը Անի մայրաքաղաքի միջնաբերդը, որ թագաւորում էր իւր ոտների տակ տարածուած քաղաքի

և շրջակայքի վերայ: Լեռնադաշտի նեղ և երկար շղթան՝ բաւականին ցած է ոչ միայն Անույ վերայ տիրող բարձրութիւնից, այլ մասամբ էլ նորա մնացած գաղտագետնի մակերեսից: այս շղթան ծածկուած բլուրներով և Անին շրջապատող գետերի և գետակների խառնուրդի մօտ՝ լեռը վերջանում է ուղղահայեաց ժայռերով, որի զեպի գագաթը տանող ճանապարհը մարդկային նուաճման մի գործ է բնութեան վերայ: նեղ, այժմ կիսաքանդուած ճանապարհը՝ կտրելով ժայռը, գտնւմ է Ալաշա գետակի կողմից մի զուգի պտուղներող բարձրութեան վերայ և հասնում է մի փոքրիկ դաշտակի՝ առ առանհի տասը սառնի մեծութեամբ: այստեղ, ինչպէս կարծում են մի քանիսը, մի ժամանակ կանգնած պիտի լինի Անահիտ աստուածուհու տաճարը, և որի անունով իբր թէ անուանուած է մեր քաղաքը: բայց և այնպէս, զեռես համարեա ոչինչ չի հաստատուում այս տառապելի հիմնաւորութիւնը: Ճիշտ է միայն որ այստեղ չորրորդ դարուց սկսած կանգնած էր մի եկեղեցի, որի հիմնաքիւղիւնը՝ աւանդութիւնը վերագրում է Գրիգոր Լուսաւորչին: և այս պարզ երեւում է մի առձանագրութիւնից, որ պահպանուած է մասմա կիսակեր տաճարի պատի վերայ, վերանորոգուած 43րդ դարում:

Բայց մինչև հիմայ Անույ մէջ գտնուած չէ մի արձան, որ պատկանի նորա յառաջ քան Բագրատունեաց շրջանի զոյութեանը: «Երկուպեան» շինութիւնները, նկարուած Անույ մէջ մի քանի ճանապարհորդներից, ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ ձիթանքի մնացորդներ, բազկացած մեծ քարերից:

Թրգմ. Տ. Մ.

Համալսարանական Ուսանող

Մուրատեան Վարժարանիմ Գաղուայի:

Շարայաբելի

